

## ԸՆԴՀԻՄԱԽՈՍԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

Եվա Մնացականյանի՝ «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» խորագրով դոկտորական ատենախոսության վերաբերյալ

Թումանյանագիտությունը վաղուց արդեն մի մեծ գիտաճյուղ է, որի հիմքերը դրվել են մեծ գրողի ողջության օրոք առաջին տպագիր գործերի վերաբերյալ լուս տեսած գրախոսություններով ու հեղինակավոր մտավորականների գրավոր կարծիքներով և անցել է զարգացման 130-ամյա արդյունավոր ճանապարհ:

1890-ական թթ. սկզբնավորված այդ գիտաճյուղն իր անուրանալի նպաստն է բերել ոչ միայն մեծ գրողի կյանքի և ստեղծագործության ճանաչմանն ու գիտական գնահատմանը, այլև մեր ողջ ազգային գրականության ու մշակույթի արժենորմանն ու մտավոր վերելքի բնութագրմանը: Ահա մեր քննարկմանն է ներկայացված թումանյանագիտական մի նոր ձեռքբերում ևս՝ Եվա Մնացականյանի՝ «Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» խորագրով ատենախոսությունը՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար:

Հայ գրականագիտության մեջ ե. Մնացականյանը նորահայտ անուն չէ. այն սակավաթիվ բանասերներից է նա, որը չի բավարարվել թեկնածուական աստիճանով և պրատող միտք ու եռանդուն աշխատասիրություն է դրսելու թե՛ որպես բանիմաց ուսուցիչ և դասախոս, թե՛ որպես իր հրապարակած երկու մենագրություններով ու մի քանի տասնյակ հոդվածներով հայտնի նպատակալաց գրականագետ-հետազոտող: Առավել գնահատելի է բնագրագետ-տեքստաբանի և ծանոթագրողի նրա ներդրումը Հովհաննես Թումանյանի երկերի ակադեմիական տասնհատորյակի ընթացիկ հրատարակության մեջ: Միամիտներն ու չարամիտները կարող են բարձրաձայնել, թե մի մեծ բան չէ շուրջ 130 տարվա մամուլից, զանազան գրքերից ու ժողովածուներից հավաքել, կողք կողքի դնել և նկարագրել Թումանյանի ստեղծագործություններին վերաբերող առաջին գրախոսությունները, առաջնորդողները, հոդվածներն ու ուսումնասիրությունները, մենագրությունները: Մինչդեռ իրականում դա աշխատատար մեծ գործի երևացող մասն է միայն:

Շատ չխորանալով մանրամասների մեջ՝ ասենք, որ Ե. Մնացականյանը կատարել է տևական գրականագիտական-բանասփրական արդյունավետ աշխատանք՝ թումանյանագիտության սկզբնավորումը վավերագրելու, նրա արդյունքներն ի մի բերելու դրանք գրականագիտության արդի նվաճումների դիտանկյունից համակարգելու և արժևորելով՝ նոր սերունդների սեղանին դրվելու իմաստով։ Աշխատանք, որի համակողմանի ընդգրկունությունը այլ հանգամանքներում, Պ. Սևակի հետևողաբար կարելի կլիներ վերնագրել «Թումանյանագիտության սկզբնավորումն ափի մեջ»։

Դյուրին չի եղել Թումանյանի գրական մուտքն ու ինքնահաստատման ուղին։ Գաղտնիք չե. որ օտար փիլիսոփայական ու հասարակական հոսանքների, արվեստի զանազան տեսությունների դրույթներով հազեցած ժամանակի քննադատությունը, որ հաճախ էր դրսեորում աշառության ու կողմնակալության երևույթներ, սկզբնապես այնքան էլ բարեհաճ և արդարամիտ չի եղել ազգային հանճարի նկատմամբ, իսկ հայ իրականության մեջ դեռևս ճշտված չին գրական ժանրերի, գեղարվեստական պատկերի, հերոսների կերպավորման, ժողովրդական նյութերի գրական մշակման, օտար գրականություններից թարգմանության, լայն առումով՝ իրականության հետ արվեստի գեղագիտական հարաբերությանն առնչվող բազմաթիվ ինտիրներից շատերի առաջադրողն ու լուծողը մեր իրականության մեջ հենց Թումանյանն ինքն էր։ Բնական է, որ նա ել պիտի քննադատության տեսադաշտում լիներ կենտրոնական թիրախներից մեկը։

Թումանյանագիտությունն սկիզբ է առել նախանցյալ դարի վերջերից, երբ մամուլում և առանձին գորերով նոր էին տպագրվում ազգային հանճարի երկերը, և ժամանակի գրական մտավորականները՝ Մ. Աբեղյան, Լեռ, Շիրվանզադե, Ավ. Արասիսանյան, Ա. Չոպանյան, Լ. Մանվելյան, Խ. Մալումյան, Ն. Աղբալյան, Ս. Հայկունի, Տ. Դրամիյան, Պ. Մակինցյան, Վ. Տերյան, Հ. Սուրիխաթյան, Հ. Քյուֆեցյան-Օշական, Ստ. Զորյան, Ե. Չարենց և ուրիշներ, հանդես էին գալիս նրանց մասին գնահատողական կամ քննադատական հոդվածներով։ Փաստորեն, Թումանյանի գրական վերելքին ու ժողովրդականությանը համընթաց, մամուլում տպագրվեցին փոքրիկ ու մեծ գրախոսություններից սկսած՝ մինչև լրջագույն դրվատող ու բանավիճային հոդվածներ, ծավալուն գիտական ուսումնասիրություններ ու մենագրություններ, որոնցով աստիճանաբար ձևավորվեցին թումանյանագիտության ներկա համակարգը և մեծ գրողի մասին մեր այսօրվա ըմբռնումներն ու պատկերացումները։

Գրականագիտական տարրեր մեթոդների գործադրմամբ՝ աստիճանական նվաճումների հենց այս ընթացքն է գիտականորեն համակարգել ու քննութագրել Եվա Մնա-

ցականյանն իր դոկտորական ատենախոսության մեջ, որը պիտի գնահատվի թե՛ Թու-  
մանյանի ստեղծագործության արժևորման և թե՛ մեր գրաքննադատական մտքի  
պատմության լուսաբանման տեսանկյունից: Այս մոտեցումն ակնառու է դարձնում, որ  
հայցորդը նախ՝ իրոք կատարել է նյութերի հավաքման բարեխիղճ ու տքնածան  
աշխատանք, ապա՝ դրանց թեմատիկ դասդասումով, ըստ գրական խնդիրների կարևո-  
րության և իրեն հետաքրքրող գիտական հարցադրումների դիտարկմամբ, ինչպես և  
տվյալ ժամանակահատվածի գրական ըմբռնումների հաշվառմամբ արժևորել թուման-  
յանագիտության զարգացման շրջափուլերն ու զարգացման աստիճանական ընթաց-  
քը: Սրա շնորհիվ ատենախոսությունն ստացել է նպատակահարմար կառուցվածք ու  
բովանդակային հարստություն:

Աշխատության չորս ծավալուն գլուխներում, որոնք ունեն մի քանի ենթագլուխներ  
(1-ինը՝ 4, 2-րդը՝ 5, 3-րդը՝ 6, 4-րդը՝ 3 ենթագլուխ), թումանյանի ստեղծագործություն-  
ները հստակորեն բնութագրվում են հայ գրաքննադատական մտքի համապատկերում  
թե՛ իր ժամանակի մեջ և թե՛ նրանից դուրս՝ հետագա ժամանակներում: Այսպիսով  
պարզ է դառնում նաև թումանյանին՝ որպես գրողի, ընկալման և նրա ստեղծագոր-  
ծության արժևորման ընթացքը:

Ատենախոսության գիտական բովանդակության, թեմայի հրատապության ու ար-  
դիականության, «հարցի պատմության» կամ նյութի մշակվածության աստիճանի  
ուսումնասիրության մեթոդաբանության, հարցադրումների հաջորդակարգության, իր  
նպատակների ու խնդիրների մասին հեղինակը հիմնավոր բացատրություններ է տվել  
ներածության մեջ՝ արժանանին հատուցելով նախորդ թումանյանագետներին՝ Ա. Տեր-  
տերյանին, Ա. Ինիկյանին, Մ. Մկրտչյանին, Էդ. Չրբաշյանին, Հր. Թամրազյանին, Լ. Կարա-  
պետյանին, Լ. Հախվերդյանին, Զ. Ավետիսյանին, Ժ. Քալանթարյանին, Ս. Հարու-  
թյունյանին և մյուսներին: Խսկ տասը կետից բաղկացած եզրակացություններն ամփո-  
փում են ուսումնասիրաբառության գիտական արդյունքները:

Որպես ատենախոսի առավելություն՝ պետք է արձանագրենք, որ նա գիտական  
բարեխնդության հետ միասին հանդես է բերել գրական երևոյթները դիտարկելու  
անուրանալի ձիրք, վիթխարի նյութը համապատասխան գլուխներում ու ենթագլուխ-  
ներում դասակարգելու և դրանք դիպուկ վերնագրելու գնահատելի հմտություն: Դրա  
արդյունքն են ատենախոսության կուտ, գրեթե անխոցելի կառուցվածքը, շարադրանքի  
հստակությունն ու գրական երևոյթների բանաձևային որակումները, որոնք առավել  
տեսանելի են եզրակացություններում: Այսպես, առաջին գլխի ընդհանուր վերնագիրն

Ե «Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները 19-րդ դարի 90-ական թվականների գրաքննադատության գնահատմամբ», իսկ նրա հինգ ենթագլուխները համապատասխանաբար վերնագրված են՝ 1-ին՝ «19-րդ դարի 90-ական թթ. քննադատության միտումները և Հովհաննես Թումանյանը», 2-րդ՝ «Հ. Թումանյանի անդրանիկ ժողովածուն իբրև ժողովրդային եպիկ բանաստեղծի ներկայացման հայտ», 3-րդ՝ ««Բանաստեղծություններ» երկրորդ ժողովածուն իբրև որոնումների նոր արտահայտություն», 4-րդ՝ «Լոռեցի Սաքոյի հոգեբանական հիմնավորվածության հարցի շուրջ», 5-րդ՝ «Հ. Թումանյանի անդրանիկ թարգմանությունները» («Շիլհոնի կալանավորը», «Մծիրի»):

Եվ այս հարցադրումները դիտարկված են 19-րդ դարի վերջին տասնամյակի «հին» ու «նոր» քաղաքակրթությունների, հայ իրականություն ներթափանցած փիլիսոփայական ու հասարակական նոր հայացքների, արվեստի ավանդական ու նոր տեսությունների ցավագին բախման, ազգային ազնիվ գաղափարաբանության և կուսակցական նեղմտության, գաղափարական տարբեր ուղղություններ դավանող մամուլի հակասություններում, գրական նոր ուղղությունների, հոսանքների, դպրոցների ձևավորված այն մթնոլորտի համապատկերում, որտեղ կայացել է Թումանյանի գրական հայտնությունը: Իսկ քնորոշ վերնագրերը հենց այն հարցադրումներն են, որոնք արծարծել է հայցորդն իր շարադրանքում և տվել դրանց գիտականորեն ընդունելի պատասխանները: Ընդ որում, Թումանյանի ստեղծագործությունների առաջին գնահատականները, թեր և դեմ կարծիքները նա արժնորել է սթափ մտքով, ասօրվա գրականագիտական մտածողությամբ և թումանյանագիտության նվաճումների դիրքորոշությունը: Իրավացի է ատենախոսը՝ 90-ական թթ. Թումանյանի առաջին քննադատությունը առանձնացնելով Մանուկ Աբեղյանին, որը բացառիկ ներքնատեսությամբ բանաստեղծությունների տպագիր առաջին ժողովածուից կուհել էր մեծ գրողի ապագան:

Նույն լրջմիտ ու շրջահայաց վերաբերմունքը Ե. Մնացականյանը դրսեւորել է ատենախոսության հաջորդ գլուխներում, որոնք, առանցքային լինելով, առաջինի տրամաբանական շարունակությունն են: Նրանցում հաջորդաբար դիտարկվում են 1900-ական, 1910-ական թվականները՝ ուրվագծելով հայ քննադատական մտքի գարգացման թերևս ամենից բուռն ժամանակների՝ գիտական հետաքրքրություն ներկայացնող պատմությունը:

Առանձնապես հաջողված ենք համարում ատենախոսի անդրադարձը այն բանավեճերին, որ ծագել էին բանահյուսական նյութերի գրական մշակման շուրջ Ս.

Հայկունու, Տ. Դրսմիյսնի, լայն առումով՝ Թումանյանի և «հայոց դրամիյանիզմի» միջև։ Այդ Եջերում լավագույն կողմերով է դրսևորվել թումանյանագիտության նվաճումներին կատարելապես տիրապետող հասուն գրականագետը։

Երրորդ գլուխ 5-րդ ենթագլուխը նվիրված է 1916 թ. «Հայաստանի պոեզիան» ժողովածուին և ոռու մտավորականների՝ Յու Վեսելովսկու, Վ. Բրյուսովի և ուրիշների կողմից Թումանյանի գնահատմանը, որի վերաբերյալ ատենախոսի դիտարկումներին համամախտ ենք։ Ընդունելի է նրա համերաշխությունը պրոֆ. Մ. Զանփոլադյանին՝ այդ նշանավոր անթոլոգիայում Հովհ. Թումանյանին և վաղուց մոռացված Լեռենցին Յու Վեսելովսկու կողմից գրեթե նույնաչափ գրական «տարածք» հատկացնելու խնդրում։ Ավելին, ատենա-խոսը խորանում է նաև պատճառների մեջ և երևույթը բացատրում ոռու իրականության մեջ Թումանյանի մինչ այդ ճանաչման աստիճանով։

Չորրորդ գլուխը դիտարկում է խորհրդային առաջին տարիների՝ 1920 – 23 թթ. քննադատության վերաբերմունքը արդեն հասուն և հանճարի բարձունքները նվաճած Թումանյանի ստեղծագործության նկատմամբ։ Կարևոր ենք համարում ոչ միայն Թումանյանի առանձին ստեղծագործությունների վերաբերյալ մամուլում եղած արձագանքների՝ Նալբանդյանի ասած «կրկին բեկումները», այլև ատենախոսության այն ենթագլուխները, որոնք ներկայացնում են Թումանյան մարդու և քաղաքացու հանրային գործունեությունը, ՀՕԿ-ի նախագահի պաշտոնում նրա ուղևորությունը Պոլիս և շփումները արևմտահայ մտավորականության հետ, ինչպես նաև հանճարեղ գրողի մահվան արձագանքները հայ և օտար մամուլի Եջերում ու հետմահու հրատարակություններում։

Հարկ ենք համարում ընդգծել նաև, որ ատենախոսության Եջերում Հովհ. Թումանյանը ներկայացված է որպես համահայկական երևույթ՝ «ամենայն հայոց բանաստեղծ» հասկացության բովանդակ իմաստով։ Ատենախոսը անհրաժեշտ չափով անդրադարձել է նաև արևմտահայ գրական-մշակութային կյանքի գլխավոր կենտրոնի՝ Պոլսի հայ մտավորականության՝ Թումանյան երևույթին ու նրա ստեղծագործությանը տղված գնահատականներին, որոնց մեջ ևս Թումանյանը ներկայացվում է որպես ողջ հայության կյանքի, իդերի ու ձգտումների բարձրագույն արտահայտիչ։ Գնահատելի են հատկապես արևմտահայ գրադատության խոշորագույն դեմքի՝ երբեմն ծայրահեղ ու քմահաճ Հ. Օշականի թումանյանական արժենորումների լուսավոր և ստվերութ կողմերի գնահատումները։

Ատենախոսությունն ավելի կատարյալ տեսնելու ցանկությունը պարտավորեցնում է արտահայտել նաև մի քանի նկատառումներ:

Ուսումնասիրվող նյութի առատությունը, ժամանակի գրական-մշակութային կյանքը և նրանում թումանյանի բացառիկ դերը բարեխողնորեն ներկայացնելու ազնիվ ձգտումն էլ բազմաթիվ գիտական արժանահիքների հետ միսաին պայմանավորել են նաև ատենախոսության անցանկայի ծավալը՝ 610 էջ, որի համար հայցորդը նաև դիտողության պիտի արժանանա՝ դոկտորական ատենախոսության համար սահմանված ծավալը գրեթե կրկնակի գերազանցելու և ասելիքը խոսքային որոշակի տարածքում չներկայացնելու համար: Մեր կարծիքով, սակայն, ներկա դեպքում եականը սա չէ, այլ այն, որ ատենախոսության հերինակը հստակորեն պատկերացրել է իր անելիքն ու ասելիքը և ճշգրիտ քայլերով իրագործել առաջադիր նպատակը:

Էջ 515 -ում կարդում ենք. «Քառյակներ Թումանյանն սկսել է գրել 1916 թվականից: Բայց նրա՝ իբրև քառյակագիր բանաստեղծի դեմքը բնորոշող կատարյալ նմուշները վերաբերում են 1919 – 22 թվականներին»:

Սոհասարակ, Ե. Մնացականյանը կատարել է թումանյանական քառյակների և նրանց անմիջական արձագանքների ճիշտ վերլուծություն: Սակայն մեզ թույլ ենք տալիս կատարել մի հիշեցում: Նախ՝ Թումանյանը առաջին երկու քառյակները, որոնք պիտի մտնեին «Հառաջանք» պոեմ, գրվել են 1890 թ.: Ուրեմն՝ 1916 թվականը քառյակագրության սկիզբը համարելն ակնհայտ սխալ է: Երկրորդ՝ ինչ չափանիշներով են 1916 – 1918 թթ. գրված հանճարեղ քառյակները ստորադասվում 1919 – 22 թթ. գրվածներին, եթե հիշենք, որ՝ «Ո՞ւ կորան»-ը գրվել 1916 թ. հունիսին, «Երկու դարի արանքում»-ը՝ 1917 թ. հունվարին, «Ծով է իմ վիշտն անափ ու խոր»-ը՝ փետրվարին, «Քանի մահ կա իմ սրտում»-ը՝ նոյեմբերի 7-ին, «Կյանքից արբած անցավոր»-ը՝ նոյեմբերի 10-ին, «Ո՞վ իմանա՞ուր ընկանք»-ը՝ նոյեմբերի 30-ին, «Ինչքան ցավ եմ տեսել ես»-ը՝ դեկտեմբերի 24-ին, «Հոգիս տանը հաստատվել»-ը՝ դեկտեմբերի 27-ին, «Լիներ հեռու մի անկյուն»-ը՝ 1918 թ. փետրվարի 2-ին, «Երկու շիրիմ իրար կից»-ը՝ փետրվարի 4-ին, «Բերանն արնոտ Մարդակերը են անբան»-ը՝ նոյեմբերի 3-ին: Ասել կուզի՝ մեջբերված անզգույշ արտահայտությունը կամ պետք է քառյակների վերլուծությամբ հիմնավորվեր և ցուց տրվեին 1919 – 22 թթ. քառյակների առավելությունները, կամ խնրագրվեր, մանավանդ որ այն ոչինչ չի ավելացնում իրոք լավ աշխատանքին: Բացի այս, նա բարեխողնորեն բերում է թումանյանին «հայոց Օմար Խայամ» անվանող Ավ.

Ահարոնյանի այն բնութագրումները, որոնք վերաբերում են 1916 - 18 թթ. գրվածներին. օրինակ՝ «Բերանն արնոտ»-ը, «Քանի՛ մահ կա իմ սրտում»-ը:

Համամիտ ենք վերջին գլխում 1920 - 23 թթ. ամենակարճ ժամանակահատվածի քննության սկզբունքներին ու հարցադրումներին և թումանյանին խորհրդային նոր արվեստի տեսանկյունից գնահատողների կամ մերժողների տեսակետների անդրադարձին: Իր իրավունքն է «Երեք ռեկլարացիայի» շրջանում Զարենցի՝ «Ինչ պիտի լինի արդի հայ բանաստեղծությունը» հոդվածում թումանյանի գնահատականի վրա չծանրանալը, սակայն «Երկու աշխարհի սահմանգծում» հոդվածում թումանյանի չարենցյան «մերժումը» սկզբունքային է և անշրջանցելի. «Քաղաքում նստած՝ նա միշտ երազել է գյուղը, Էլեկտրաքարշով շրջել է փողոցի փողոց և հետո իրկունները Էլեկտրական լամպի սառը լուսյսի տակ գրել է իին, երազ դարձած օրերի մասին զարմանալի գեղցիկ պոեմներ ու երգեր»:

Կարծում ենք նաև՝ հանիրավի է աչքաթող արվել քննադատության մարքսիստական սոցիոլոգիական դպրոցի այսպիսի նշանավոր ներկայացուցիչ, ինչպիսին Հ. Սուրխաթյանն է: Թվարկվում են այդ դպրոցի բոլոր հետևորդները առանց 1910-1930 - ական թթ. հենց թումանյանին, Տերյանին, Զարենցին, Բակունցին, Մահարուն արժելորած, Թիֆլիսում լուս տեսած «Մշակ», «Կարմիր աստղ», «Մարտակոչ», «Պրոլետար» թերթերի խմբագիրներից և ժամանակի ամենից եռանդուն քննադատներից մեկի անվան հիշատակման: Սակայն հենց նա է հերքել թումանյանի վերաբերյալ Վ. Տերյանի «ունիկումի» տեսությունը, որի հանդեպ հայցորդը վերաբերմունք գրեթե չի արտահայտել: Բայց, ինչպես Էդ. Չրբաշյանն է ժամանակին նկատել Սուրխաթյանի բնորոշումը, թումանյանը ոչ թե ունիկում՝ բացառիկ ու հազվադեպ կայուն մեծություն է, այլ կենդանի գոյություն, որը որպես ուղենիշ «միշտ կանգնած է հայ գրականության գարգացման գլխավոր մայրուղու սկզբում»:

Կան հազվադեպ նկատվող մեկ - երկու մշուշոտ ձևակերպումներ: Էջ 8-ում առկա է «Գրեթե նույն սկզբունքով է աշխատում L. Հախվերդյանը», Էջ 10-ում՝ «Սակայն ինչպես նախորդ ուսումնասիրողների դեպքում, դարձյալ չունենք քննադատական բնագրի ամրողական նկարագիր»:

Անձամբ մեզ ընդունելի չէ թե՛ ատենախոսության մեջ, թե՛ սեղմագրում գործածված «Թումանյանի կենդանության ժամանակ» արտահայտությունը. մանավանդ անմահ թումանյանի կապակցությամբ անհարմար է այդ կիրառումը: Նույն է, ինչ թաղման ծիսակարգ կատարող քահանաներն այսօր գրաբարով «դատաւոր կեն-

դանեայց եւ մեռելոց»-ը մատչելիության համար թարգմանում են «դատավոր կենդանիների և մեռելների»: Հարց կառաջանա՝ ո՞ր կենդանիների: Գերադասելի է «Թումանյանի ողջության օրոք» ձևակերպումը:

Մեծ ու ծանրակշիռ աշխատանքի դեպքում այս չնշին նկատողությունները կարող են և չինել, սակայն անհրաժեշտ համարեցինք զգուշացնել և սրել ուսումնասիրողի զգնությունը հետագա աշխատանքներում:

Մեր տպավորությամբ՝ ատենախոսն օժտված է գրական անհրաժեշտ գրագիտությամբ, վերլուծական խոր մտքով ու սուր դիտղականությամբ, հատկանիշներ, որոնք ատենախոսության շարադրանքը դարձրել են հաճելիորեն ոյուրընթեռնելի, հարցադրումները՝ գիտական, իսկ դրանց պատասխաններն ու եզրահանգումները՝ համոզից: Արձանագրում ենք նաև, որ սեղմագիրն ու հայերենով Հայաստանում և արտասահմանյան օտարակեզու հրապարակումները արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ե. Մնացականյանի գիտամանկավարժական գործունեությունը և մանավանդ սույն ատենախոսության գիտատեսական մակարդակը ձևավորում են այն համոզումը, որ վաղուց գիտության ասպարեզում է արդեն գնահատելի վաստակի, մեծ ներուժի տեր, գիտական բարձրագույն աստիճանի համար հասունացած կարող անհատականություն, որից սպասելի են նոր ձեռքբերումներ:

Այս համոզումով ել միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ «Գրականագիտություն 003» մասնագիտական խորհրդին՝ «Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ» ատենախոսության հրապարակային պաշտպանության համար Եվա Մնացականյանին շնորհելու բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, որին նա միանգամայն արժանի է:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՄԱԽՈՄ** *ՀՀ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՄՈՒՐԱԳՅԱՆ*

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի պատվավոր վարիչ

Պրոֆ. Ս. Մուրադյանի ստորագրությունը հաստատում են՝

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան՝

**ԱՐԺՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ**

Բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

10. 11. 2021